

ՀՏԴ 343

Քրեական իրավունք և կրիմինոլոգիա

**ՇՈՐԹՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽՄԱՆ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Է.Ա.Արզումանյան

Հատուկ կանխումը իրականացվում է սոցիալական խմբերի, առանձին անձանց և կազմակերպությունների կամ գործունեության ոլորտների վրա ներգործության ճանապարհով, որոնց վերաբերյալ կարելի է ենթադրել, որ նրանք կրում են բարձր վիկտիմայնություն և քրեածինություն:

Այսպես, օրինակ, առանձին անձանց մոտ բարձր քրեածին վիճակը կարող է որոշվել նախորդող հանցագործության կատարման փաստերով (այդ դեպում կրիմինալոգիական կանխումը ուղղված է ռեցեդիվի թույլ չտալու վրա), վարչական և պաշտոնական իրավախախտումներով, անբարոյական արարքներով, վարքագծով, որոնք ակնհայտորեն չեն համապատասխանում իրագործվող սոցիալական նշանակությանը, նպատակային կառուցվածքներին, որոնց օրինական ճանապարհով հասնելը կոնկրետ մարդու համար հնարավոր չէ:

Առանձին գործունեության ոլորտների և օբյեկտների նկատմամբ ևս կարող են իրականացվել հանցագործություններ, հաշվի առնելով հանցագործների համար նրանց գրավչությունը (ապահովածության ցուցադրում) և «ստվերային» գործունեությունը: Անհրաժեշտ է հաշվի առնել վիկտիմոլոգիական երևույթը այն անձանց շրջանակներում, ովքեր հաճախակի են դառնում շորթման զոհ: Այդ ոլորտների անձանց հարաբերություններում և օբյեկտներում նույնպես պետք է իրականացվի հատուկ պրոֆիլակտիկա՝ ուղղված շորթման կատարումից նրանց պաշտպանության բարձրացմանը:

Շորթման վաղ կանխման միջոցները կարող են կրել նախազգուշական բնույթ, այն մշակվում և գործողության մեջ է դրվում կանխատեսման հիման վրա: Հանցավորության (այդ թվում՝ շորթման) պատճառների, նպատակային և այլ գործոնների բացահայտման և վերացման (ուղեփակման, չեզոքացման) համար նախանշված լինելը հատուկ կանխման գլխավոր առանձնահատկությունն է՝ պրոֆիլակտիկ հատկանիշը: Դրա հետ մեկտեղ, այն ներառում է նաև մտադրվող և նախապատրաստվող հանցագործությունների նախականխումն ու հանցագործություն կատարողների խափանումը:

Շորթման անմիջական կանխումն ուղղված է հասարակության մեջ արդեն գոյություն ունեցող քրեածին գործոնների չեզոքացման վրա: Շորթման ինքնաղետնաբնույթայնությունը կապված է կազմակերպված հանցավոր կազմավորումների և առանձին հանցագործությունների խափանման հետ՝ ուղղված հասարակական խմբերի և շորթման կատարման մեջ նոր անձանց ներգրավմանը:

Գլխավոր սկզբունքների թվում, ինչպես ընդհանուր, այնպես էլ հանցավորության հատուկ կանխումը, բոլոր կրիմինոլոգների կողմից անվանվում է օրինականություն: Անթույլատրելի է

խորակաճ բնույթ կրող կանխաման միջոցների կիրառումը՝ քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի չհիմնավորված սահմանափակումներով:

Ինչպես արդեն նշվել է, հանցավորության (այդ թվում՝ շորթման) կանխաման ընդհանուր-սոցիալական և հատուկ (կրիմինալոգիական) կանխումը կանխարգելիչ գործունեության փոխկապակցված և փոխադարձաբար պայմանավորված տեսակներ են: Միևնույն ժամանակ, ի տարբերություն ընդհանուր-սոցիալական միջոցների, կանխաման հատուկ միջոցները նախ և առաջ բնութագրվում են նրանով, որ դրանք անմիջականորեն ուղղված են հանցագործությունների դեմ պայքարին:

Հարկ ենք համարում նշել նաև, որ, ինչպես ընդհանուր-սոցիալական կանխարգելիչ միջոցառումները, կանխաման հատուկ միջոցները ևս կարող են լինել տնտեսական, սոցիալական, քաղաքական, մշակութային, դաստիարակչական, կազմակերպակառավարչական և իրավական բնույթի: Սակայն, տվյալ առումով, այդ միջոցների գլխավոր առանձնահատկություններն այն են, որ, ի տարբերություն ընդհանուր-սոցիալականների՝

1) դրանք անմիջականորեն ուղղված են հանցավորության պատճառների և նպաստող պայմանների հաղթահարմանը, ինչպես նաև հանցանք կամ հանցանքի փորձ կատարած, ինչպես նաև այն անձանց ուղղմանը, որոնց նախորդող վարքագիծը վկայում է հետագայում նրանց կողմից հանցանք կատարելու հնարավորության մասին,

2) դրանցում գերակայում են հարկադրանքի տարրերը, քանի որ դրանք հիմնականում ուղղված են արդեն իսկ հանցավոր վարքագիծ դրսևորած անձանց վրա ներգործելուն (հանցագործության մեջ մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելը, նրանց նկատմամբ պատիժ նշանակելը և այն իրականացնելը հստակ կարգավորվում են օրենքով, որի պահանջների կատարումը հնարավոր չէ առանց հարկադրանքի),

3) այդ միջոցների կիրառման սահմանները և արդյունքները համեմատաբար սահմանափակ են, ինչը նախ և առաջ պայմանավորված է դրանց առջև դրված խնդիրներով:¹

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ հանցավորության (այդ թվում՝ շորթման) հատուկ կանխումն իրենից ներկայացնում է կանխարգելիչ ներգործության բարդ, բազմաբովանդակ, բազմամակարդակ մի համակարգ, դրա գործողության արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է հստակ պատկերացում ունենալ վերջինիս բաղկացուցիչ բոլոր տարրերի (կանխաման միջոցների) ամբողջության և դրանց կիրառման հնարավորությունների մասին: Այդ նպատակով կրիմինալոգիական տեսության մեջ օգտագործվում է հանցագործությունների հատուկ կանխաման միջոցների դասակարգումը:

Մասնագիտական գրականության մեջ այն ընդունված է իրականացնել ըստ՝

- 1) ծավալի (ընդգրկման զանգվածի)
- 2) ուղղվածության
- 3) տարածքային մասշտաբների
- 4) ներգործության ձևի և մեխանիզմի

5) մշակման, նախապատրաստման, ծրագրավորման, պայմանավորման և իրականացման սուբյեկտների:²

Ըստ ծավալի քննարկվող միջոցների դասակարգումը պայմանավորված է ներգործության միավորների (երևույթների, գործընթացների, իրավիճակների և անձանց) քանակով: Մասնավորապես, տվյալ հիմքով առանձնացվում են հատուկ կանխաման ընդհանուր, լավբային և անհատական միջոցները:

Կանխարգելիչ ընդհանուր միջոցառումներն ուղղված են ընդհանուր հանցավորության կամ դրա առանձին տեսակների պատճառների և նպաստող պայմանների բացահայտմանը, վերացմանը, թուլացմանը կամ չեղոքացմանը: Այլ կերպ ասած, դրանք նպատակաուղղված են ներգործության օբյեկտների անորոշ, չանհատականացված շրջանակին: Սրանց օրինակ կարող են հանդիսանալ.

- ✓ սոցիալ-տնտեսական միջոցները, կապված բնակչության կենսամակարդակի բարձրացման և հատուկ երաշխիքների տրամադրման հետ,
- ✓ սոցիալ-իրավական միջոցները, հիմնված հիմնականում պետական մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից ընդունվող որոշումների գործընթացներում թափանցիկության

¹ *Տե՛ս Տարկսո՛վ Գ.Տ. Социальная система предупреждения преступности. Ереван, 1975, էջեր 73-74:*

² *Տե՛ս, օրինակ, Криминология: Учебник /Под ред. В.Н. Кудрявцева и В.Е. Эминова. М., 2000, էջեր 292-296:*

և թույլատրելիության ապահովման վրա՝ տնտեսական գործունեության վարման, ֆինանսական հոսքերի ղեկավարման,

✓ կազմակերպա-կառավարչական միջոցները, հիմնված իրավապահ և պետական այլ մարմինների էֆեկտիվ աշխատանքի բարձրացման և աշխատակիցների աշխատանքի լավ կազմակերպման վրա,

✓ գաղափարա-բարոյական միջոցները, ենթադրում է հասարակության մեջ համոզմունքների և արժեքային կողմնորոշումների ձևավորում, կապված օրինապահ վարքագծի հետ,

✓ սոցիալ-հոգեբանական միջոցները, ուղղված հասարակության քրեածին բացասական միտումների և բացասական մտային ուղղվածությունների ճնշմանը, օրինակ, ազգայնամոլության հետ կապված բարձր տազնապալիությունը, վախը սոցիալական կատակլիզմների նկատմամբ,

✓ բժշկական և հոգեբանա-մանկավաժական միջոցները, ուղղված սոցիալական վտանգավոր հիվանդությունների տարածման կանխարգելմանը, հոգեկան շեղումներ ունեցող անձանց բուժմանը,

✓ տեխնիկական միջոցները, ներառյալ տեխնիկական համակարգերը՝ հանցագործության կատարումը բարդացնող (պահպանության ազդանշաններ, տեսախցիկներ) կամ իրականացվող գործունեության նկատմամբ թույլատրելի հսկողություն, կապված հնարավոր հանցագործության կատարման հետ, (հսկիչ դրամարկղային մեքենա) ինչպես նաև տեղեկությունների պահպանման անվտանգության միջոցները,

✓ իրավական միջոցները, կապված քրեական օրենսգրքի և այլ նորմատիվ ակտերի արդիականացման հետ՝ հանցավորության դեմ պայքարի հիմքը հանդիսացող:

Խմբային միջոցառումներն իրականացվում են երևույթների, գործընթացների, իրավիճակների և անձանց՝ որոշակի հատկանիշներով առանձնացված խմբերի շրջանակներում: Սրանց օրինակ կարող են հանդիսանալ՝ օպերատիվ հետաքրքրություն ներկայացնող անձինք, շորթման համար նախկինում դատվածները, անձինք, որոնց վերաբերյալ քրեական գործեր են կարճվել իրադրության փոփոխման, գործուն գոջալու, հանցագործության կատարման մեջ կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու, համաներման, արարքում հանցակազմի բացակայության, վաղեմության ժամկետն անցնելու հիմքով, անձինք, որոնց վերաբերյալ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, անձինք, ովքեր թույլ են տվել սեփականության դեմ ուղղված տարբեր իրավախախտումներ, արտահայտել են հանցագործության կատարման ցանկություն կամ այլ անձանց մեջ են դա արթնացրել, անձինք, որոնց ապրելու միջոցները հայտնի չեն:

Անհատական կանխման հասցեատերը, որը կարող է դիտվել որպես հատուկ կանխման տեսակներից մեկը, հանդիսանում է կոնկրետ անձը, որի անձնական բնութագրությունները օբյեկտիվորեն կարող են խոսել նրանց կողմից հանցագործություն կատարելու մասին:

Անհատական կանխման օբյեկտը կարող է լինել ինչպես անմիջական մարդը, նրա բացասական սոցիալական որակները, այնպես էլ սոցիալական միկրոմիջավայրը, նրա շրջապատը (ընտանիք, կենցաղ, աշխատանքային կոլեկտիվ):

Անձի նկատմամբ անհատական կանխման ներգործության անհրաժեշտությունը որոշվում է քրեածին գործունեության ամբողջությունը վերականգնելու ճանապարհով՝

✓ նախկինում իրավախախտում և հակաբարոյական արարք կատարելը,

✓ արժեքների ձևափոխված կողմնորոշումները, անձի սոցիալականացման ոչ լիարժեքությունը,

✓ քրեածին բնույթ կրող պաթոլոգիական հոգեկան խախտումների առկայությունը, (որոշ հոգեկան շեղումներ, սեռական կողմնորոշումներ և այլն),

✓ անձի ձևավորումը անբարեհաջող բնույթ կրող սոցիալական միջավայրում՝ անլիարժեք ընտանիք, ծնողների և մոտիկ բարեկամների հակաբարոյական և հակաօրինական վարքագիծ և այլն,

✓ անբարեհաջող կյանքի պայմանները՝ վատ նյութական և բնակարանային պայմաններ, բացասական սոցիալ-կենցաղային մթնոլորտ և այլն:

Հանցագործությունների անհատական կանխման ժամանակ կիրառվող հիմնական մեթոդը հանդիսանում է համոզման մեթոդը: Այդ մեթոդն ուղղված է անձի մոտ հասարակության մասին դրական պատկերացումների ձևավորմանը, բացասական սոցիալական կողմնորոշումների շտկմանը՝ մանկավարժական և հոգեբանական հնարքների ներգործության ճանապարհով:

Համոզման հիմնական եղանակը հանդիսանում է գրույցը, որն իրենից ներկայացնում է անձի հետ երկխոսություն: Այն կարող է սկզբից կրել ծանոթացման բնույթ, երբ անհրաժեշտ է վերականգնել անձի հետ շփումը, հետո ստանալ «առաջին ձեռքից» տեղեկություններ, նրա անձի

բնութագրության, հատուկ-կենցաղային պայմանների մասին: Տաջորդող գրույցները կարող են կրել կանխարգելիչ (տեղեկացնելով անձին հնարավոր գործողությունների հետևանքների մասին) կամ դաստիարակչական բնույթ: Զրույցի հետ զուգահեռ, համոզման մեթոդների թվին են պատկանում անձանց սոցիալական կազմակերպությունների և խմբերի մեջ ներգրավելը, ովքեր ի վիճակի են գործադրել դրական դաստիարակչական ներգործություն՝ մարզական խմբակներ, աշխատանքային և ստեղծագործական կոլեկտիվներ, հասարակական կազմակերպություններ:

Ավելի դժվար է կիրառման համար, (չնայած ավելի էֆեկտիվ է) օգնություն ցույց տալու մեթոդը: Այն կախված է կոնկրետ միջոցների իրականացման հետ, ուղղված անձի զարգացմանը և կենցաղի բարելավմանը, նրան աշխատանքի և ուսման ուղորդմանը, բարեհաջող միկրոսոցիալական միջավայրի ձևավորմանը:

Վերջապես, եթե համոզումը և օգնություն ցույց տալը հանդիսացել են ոչ էֆեկտիվ, կարող է կիրառվել հարկադրման մեթոդը: Եթե համոզման և օգնություն ցույց տալու մեթոդը պետք է իրականացվեն հիմնականում պետական հատուկ ծառայությունների և հասարակական կազմակերպությունների կողմից, ապա հարկադրման միջոցների կիրառումը միայն իրավապահպան մարմինների իրավասությունն է: Տանցագործությունների անհատական կանխման շրջանակներում ձեռնարկվող հարկադրման հիմնական միջոցների թվին են դասվում՝

- ✓ վարչական պատասխանատվության միջոցները, ինչպես պատիժ կրող (տուգանք), այնպես էլ սոցիալ-առողջարար բնույթի,
- ✓ ալկոհոլամոլությունից և թմրամոլությունից հարկադիր բուժումը, ուղղված ոչ միայն անձի առողջական վիճակի բարելավմանը, այլ նաև ալկոհոլի և թմրանյութի ազդեցության տակ հակաօրինական արարքների կանխմանը,
- ✓ անձի վրա դրված հակաիրավական գործունեությունների համար սահմանափակումները (օրինակ, պատիժը պայմանականորեն չկիրառելը կամ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը):

Անհատական կանխման հատուկ ձև է հանդիսանում իրավախախտում կատարած անչափահասների պրոֆիլակտիկան, ինչպես նաև, այն անձանց հայտնաբերումը չբացահայտված հանցագործություններով, ովքեր կարող են իրենց հանցավոր գործունեությունը շարունակել (քննչական և օպերատիվ-հետախուզական գործունեություն):

Անհատական կանխումն իրենից ներկայացնում է առանձին անձանց նկատմամբ իրականացվող կոնկրետ միջոցառումների ամբողջություն: Այն պետք է հետևողականորեն ուղղված լինի՝

- ա) տվյալ անձի վրա ազդող այնպիսի անբարենպաստ գործոնների վերացմանը կամ չեղարացմանը, որոնք կարող են հանգեցնել այդ անձի մոտ հակահասարակական ուղղվածության ձևավորմանը և նրա կողմից հանրորեն վտանգավոր վարքագծի դրսևորմանը,
- բ) տվյալ անձի սոցիալական անընդունելի այնպիսի հատկությունների, պահանջումների, արժեքային կողմնորոշումների և վարքագծի առանձնահատկությունների փոփոխմանը, որոնք կարող են ազդել նրա կողմից վարքագծի հանցավոր տարբերակամի ընտրության վրա:
- գ) անհետաձգելի այնպիսի միջոցառումների ձեռնարկմանը, որոնք կապված են նախապատրաստության փուլում կամ կատարման ընթացքում գտնվող հանցագործությունների խափանման հետ:¹

Կախված կիրառման **ուղղվածությունից** հանցագործությունների (այդ թվում՝ շորթման) կանխման հատուկ միջոցները, իրենց հերթին, կարող են դասակարգվել հետևյալ տեսակների՝

- ✓ ուղղված հանցավորության տեսակների կամ հանցագործների առանձին տիպերի վրա ներգործելուն,
- ✓ ուղղված հասարակական կյանքի այն ոլորտներին, որոնցում ձևավորվում են հանցագործի անձը և նրա վարքագիծը դետերմինացնող գործոնները,
- ✓ ուղղված յուրահատուկ հատկանիշներով բնութագրվող սոցիալական խմբերի վրա ներգործելուն,
- ✓ ուղղված տնտեսության և գործունեության այն ոլորտների վրա ներգործելուն, որոնց բնութագրական են հանցածին գործոնները:

Ըստ տարածքային մասշտաբների կանխման հատուկ միջոցները կարող են լինել՝

- ա) համապետական (ամբողջ պետության տարածքում իրականացվող),
- բ) մարզային (առանձին շրջանների տարածքներում իրականացվող),
- գ) տեղական (համայնքի, թաղի, բնակավայրի շրջանակներում իրականացվող),

¹ *Տե՛ս, նաև Криминология: Учебник /Под ред. В.Н. Кудрявцева и В.Е.Эминова. М., էջեր 292-293:*

դ)առանձին օբյեկտներում (գործարաններում, բաժնետիրական ընկերություններում և այլն) իրականացվող,

ե) բնակչության առանձին խմբերի (օրինակ՝ անչափահասների, գործազուրկների, ալկոհոլամոլների, թմրամոլների և այլն) նկատմամբ իրականացվող:¹

Ըստ ներգործության ձևի և մեխանիզմի հանցագործությունների (այդ թվում՝ շորթման) կանխման հատուկ միջոցներն ընդունված է դասակարգել հետևյալ տեսակների՝

✓ դաստիարակչական (որոնք կարող են ուղղված լինել, օրինակ, բնակչության կամ դրա առանձին խմբերի տեղեկացվածության, իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը, նրանց շրջանում սոցիալապես ընդունելի արժեքային կողմնորոշումների տարածմանը և այլն),

✓ սոցիալական աջակցության, օգնության և պաշտպանության (կիրառվում են բնակչության կրիմինալ առավել բարձրացված ռիսկով բնութագրվող խմբերի նկատմամբ),

✓ վերականգնողական (օրինակ՝ առավել վիկտիմայնության օժտված անձանց բժշկական և հոգեբանական-մանկավարժական ռեաբիլիտացմանն ուղղված),

✓ իրավական ներգործության (օրինակ՝ անվտանգության համապատասխան կանոնները խախտելու համար վարչական պատասխանատվության ենթարկելով տվյալ անձի հանցավոր արարքների կատարումից հետագայում հետ պահելը),

Մեր հետազոտության նպատակներից և խնդիրներից ելնելով, անհրաժեշտ ենք համարում առավել մանրամասն քննարկել նաև կանխման հատուկ միջոցներն՝ ըստ մշակման և իրականացման սուբյեկտների դասակարգման: Այս առումով, նախ և առաջ, պետք է նշել, որ հանցավորության (այդ թվում՝ շորթման) հատուկ-կրիմինալոգիական կանխարգելման խնդիրները լուծվում են մասնագիտացված և ոչ մասնագիտացված սուբյեկտների կողմից:

Հանցավորության կանխումը կարող է լինել ինչպես պետական կամ հասարակական կազմակերպության կամ կոնկրետ անձի առանձին գործունեության ուղղություն, այնպես էլ հանդես գալ, որպես նրա երկրորդական գործունեության արդյունք: Դրա համաձայն կարելի է առանձնացնել հանցավորության (այդ թվում՝ շորթման) կանխման մասնագիտացված և չմասնագիտացված սուբյեկտներին:

Մասնագիտացված սուբյեկտների գործունեության հիմնական ուղղություններից մեկն է հանդիսանում հանցավորության (այդ թվում՝ շորթման) կանխումը: Այդպիսի սուբյեկտների թվին ավանդաբար պատկանում են՝ ԼՂՏ նախագահը, հանրապետության օրենսդիր և գործադիր իշխանության մարմինները և այլն: Նշված սուբյեկտների կանխարգելիչ գործունեության էությունն այն է, որ վերջիններս՝

✓ ձևավորում են հանցագործությունների հատուկ-կրիմինալոգիական կանխման նորմատիվ իրավական հիմքը,

✓ սահմանում են կանխարգելիչ գործունեության այլ սուբյեկտների իրավասությունը, իրավունքներն ու պարտականությունները,

✓ իրականացնում են տվյալ գործունեության նկատմամբ հսկողություն, այդ գործունեության ծրագրավորում, պլանավորում, ինչպես նաև դրա ֆինանսական, նյութատեխնիկական, կադրային և ռեսուրսային ապահովում,

✓ անմիջականորեն անցկացնում են հանցավորության կանխարգելմանն ուղղված նպատակային միջոցառումներ:

Ինչպես դժվար չէ նկատել, հատուկ-կրիմինալոգիական կանխման պետական մասնագիտացված սուբյեկտների գլխավոր բնութագրական գծերից մեկը դրանց պատկանելիությունն է պետության իրավապահ (ռատիկանություն, ազգային անվտանգության ծառայություն, դատախազություն և այլն) և արդարադատության (դատարաններ) մարմինների համակարգին: Հիշատակված սուբյեկտներն առավելապես իրականացնում են հանցավորության կանխման հատուկ, նպատակաուղղված միջոցառումներ, որոնք իրավական բնույթ են կրում:

Ինչպես այդ կապակցությամբ արդարացիորեն նշում է Ա.Է.Ժալինսկին, այդ միջոցառումների անմիջական բովանդակությունն այն գործոնների վրա ներազդելն է, որոնք ձևավորում են տվյալ անձի կողմից վարքագծի հենց հանցավոր տարբերակի ընտրությունը:²

Բացի դրանից, իրավապահ մարմինները և դատարանները կոչված են հսկողություն և վերահսկողություն իրականացնել օրենքների կատարման նկատմամբ, օրենսդրությամբ

¹ *Տե՛ս, նաև Криминология: Учебник /Под ред. В.Н. Кудрявцева и В.Е.Эминова. М., էջեր 295-296:*

² *Տե՛ս Жалинский А.Э. Теоретические проблемы профилактики преступлений. М., 1980, էջեր 5-10:*

սահմանված կարգով արձագանքել դրանց դրույթների և պահանջների յուրաքանչյուր խախտման դեպքին, ինչպես նաև պատասխանատվության ենթարկել դրանց կատարման մեջ մեղավոր անձանց: Ինչ վերաբերում է հանցագործությունների (այդ թվում՝ շորթման) կանխարգելմանը, ապա այն, ինչպես արդեն նշվել է, համապատասխան օրենքների համաձայն, հանդիսանում է հիշատակված սուբյեկտների հիմնական գործառույթներից մեկը:

Բացի դրանից, ինչպես արդարացիորեն նշվում է մասնագիտական գրականության մեջ, իրավապահ և արդարադատության մարմինների կողմից իրականացվող հատուկ-կրիմինալոգիական կանխումը պարտադիր կերպով որոշակի ազդեցություն է ունենում նաև հանցավորության ընդհանուր-սոցիալական կանխարգելման վրա, քանի որ՝

✓ իրենց գործունեության արդյունքներով այդ մարմիններն ասիականում են երկրի օրենսդիր և գործադիր իշխանության մարմիններին՝ շուտափույթ լուծում պահանջող խոշոր սոցիալական հիմնախնդիրների վերաբերյալ,

✓ այդ գործունեության արդյունքներն էական նշանակություն ունեն տվյալ հասարակության վիճակի, դրանում առկա բարոյահոգեբանական մթնոլորտի, լարվածության, հասարակական կարծիքի, օրենքների հեղինակության բարձրացման համար:¹

Ոչ մասնագիտացված սուբյեկտների թվին, իրենց մասնագիտական գործունեության հիմնական ուղղությունների իրականացման ժամանակ, գրականության մեջ դասվում են՝ կազմակերպությունները (քաղաքական կուսակցությունները, շարժումները, հիմնադրամները, հոգևորական կազմակերպությունները և այլն) և անձինք, ովքեր իրավապահ մարմիններին աջակցում են՝ իրավակարգի պահպանմանը, (կամավորական ժողովրդական դրուժինաները, իրավապահ մարմինների արտահաստիքային աշխատակիցները և հասարակական օգնականները) մասնավոր կազմակերպությունների պահակախմբերը և անվտանգության ծառայությունները, մասնագիտացված լրատվամիջոցները, թաղային, տնային կոմիտեները, դպրոցների ծնողական խորհուրդները, բարեգործական կազմակերպությունները, ինչպես նաև բժշկական, հոգեբանական, սոցիալական կենտրոնները և այլն:

Ոչ մասնագիտացված սուբյեկտների թիվը հստակ սահմանված չէ: Պրակտիկորեն բոլոր քաղաքացիները և կազմակերպությունները մասնակցում են հանցավորության (այդ թվում՝ շորթման) կանխմանը, ստեղծելով բարեկեցիկ աշխատանքային տեղեր, իսկ ազատ ժամանակը նվիրում են անչափահասների դաստիարակությանը:

Այժմ, առաջնորդվելով հանցավորության (այդ թվում՝ շորթման) հատուկ կանխման միջոցների վերը հիշատակված դասակարգմամբ, առաջարկում ենք ընդունել «Հանցագործությունների կանխարգելման մասին» օրենք, որի դրույթների հիման վրա էլ կարգավորել հասարակական տեսուչների աշխատանքները: Անհրաժեշտ է քաղաքացիների ներգրավման նոր ձևերի որոնումներ՝ իրավակարգի պահպանման համար:

Особенности специальных мер предупреждения вымогательства.

Э.Ал. Арзуманян

Резюме

Специальное предупреждение осуществляется путем воздействия на социальные группы, отдельных лиц и организаций или сферы деятельности, в отношении которых есть основания полагать, что они обладают повышенной криминагенностью и виктимностью. Предупреждения преступности могут применяться как в отношении государственных или общественных организаций, так и в отношении определенной деятельности конкретной личности, а также являться итогом его второстепенной деятельности. В связи с этим, можно выделить предупреждения преступности (в том числе вымогательства) специализированных и неспециализированных субъектов. Непосредственное предупреждение вымогательства направлено на искоренение уже имеющихся в обществе уголовных склонностей, в связи с чем предлагалось принять закон «О предупреждении преступления», на основании положений которого урегулировать работу общественных инспекторов.

Features of special measures on the prevention of extortions.

¹ Տե՛ս, օրինակ, *Криминология: Учебник /Под ред. Н.Ф.Кузнецовой, Г.М.Миньковского. М., 1994, էջեր 167-168:*

Special deterrence is realized by means of pressure on social groups, individuals and organizations or scopes of activity in the case of which there are legal grounds to suppose that they are highly criminogenic or victimized. Criminality deterrence can be made both towards state or public organizations and towards the certain activity of the concrete individual, as well as it can be the result of his subordinate activity. In this connection one can distinguish criminality deterrence (including extortions) of the specialized and non-specialized subjects. Direct deterrence of extortion is aimed at the extermination of the criminal inclinations already existing in the society, in the connection of which the law of "About the criminality deterrence" was supposed to be adopted and to settle the work of public inspectors according to it.

ԱՐՅՄԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРЦАХСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

1(25) 2012

ՀՏԴ 33 (479.243)

Տնտեսագիտություն

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԵՎ ՍՈՅԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ՓՈՒՍԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՂՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Շ.Շ. Ասրյան

Տնտեսական աճ ապահովող տնտեսությունը ավելի մեծ հնարավորություններ ունի նոր սոցիալական ծրագրեր իրականացնելու, աղքատության և էկոլոգիական խնդիրները լուծելու ուղղությամբ՝ առանց սպառման գոյություն ունեցող ընդհանուր մակարդակը նվազեցնելու և ներդրումների ծավալները կրճատելու:

Տնտեսական աճի ապահովումը փոխառնչվում է ոչ միայն պետական համապատասխան քաղաքականությանը, այլև սոցիալ-տնտեսական այնպիսի տեղաշարժերին, ինչպիսիք են՝ տնտեսության կառուցվածքը, արդյունաբերության կառուցվածքը, տնտեսության դիվերսիֆիկացման մակարդակը, ներդրումների դինամիկան և կառուցվածքը, աշխատուժի արտադրողականության բաշխվածության անհավասարությունը և այլն: Այդ տեղաշարժերը ոչ միայն տնտեսական աճի պայմաններ են, այլև տնտեսության մրցունակության բաղադրիչներ:

2000-2005թթ. ԼՂՀ տնտեսության համար բնութագրվեցին որպես ակտիվ բարեփոխումների տարիներ. բարեփոխումների լայնածավալ միջոցառումները կարողացան ապահովել տնտեսական աճի բարձր ցուցանիշներ: Հետագայում ևս բարեփոխումներն ունեցան շարունակական բնույթ, սակայն 2010թ. խաթարվեց տնտեսության զարգացման կայուն ընթացքը, երբ կրճատվեցին և ապրանքային արտադրության, և ծառայությունների աճի տեմպերը: Սակայն պետական արդյունավետ տնտեսական քաղաքականության իրականացման արդյունքում հնարավոր դարձավ 2011թ. ապահովել 109,1 տոկոս տնտեսական աճ:

Աղյուսակ 1-ից երևում է, որ դիտարկվող ժամանակահատվածում ԼՂՀ-ում գրանցվել է բարձր՝ հիմնականում երկնիշ թվերով տնտեսական աճ: Այդ ընթացքում տնտեսական բարձր աճի վրա դրական ազդեցություն են ունեցել և ծառայությունների, և ապրանքների արտադրության ոլորտները՝ արդյունաբերությունը, շինարարությունը, գյուղատնտեսությունը¹:

Տնտեսական աճի առկա մակարդակը և միտումները մասամբ բացատրվում են ներդրումների դինամիկայով՝ կապված վերջիններիս միջև առկա ուղղակի կախվածությամբ:

ԼՂՀ ՀՆԱ-ի փոփոխությունները (2002-2011թթ.)

(տոկոսներով նախորդ տարվա նկատմամբ)

Աղյուսակ 1²

Տարիներ	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011
համախառն ներքին արդյունքը շուկայական գներով	111,3	120,2	118,2	114,1	110,1	108,8	114,3	113,1	105,5	109,1

¹ Հողվածում դիտարկվում են տնտեսական աճի և իրական հատվածի փոփոխությունները

² ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2002-2008թթ. էջ 155:

ԼՂՀ վիճակագրական տարեգիրք, 2004-2010թթ. էջ 157: